

Արձանագրություն N 2
 ՍԱԾ ԷԱՃԱՊՁԲ-21/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
 գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

12 ապրիլի 2021թ
 ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
 Նախագահ՝ Աննա Ավետիսյանը
 անդամներ՝ Հասմիկ Ղուլյանը, Մանուշակ Գրիգորյանը
 քարտուղար՝ Գ. Զանջուղազյան

I. Հայտերի բացման մասին

 (Աննա Ավետիսյան)

1. Ընդունելի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնումների էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն և կապի միջոցները
1	2	3
1	ՍԴԴ ԳՐՈՒՊ ՍՊԸ	- ք. Երևան, Ս. Զորավարի 11/1, հեռ. 041 23 02 22,
2	Լեյկո	- ք. Երևան Ֆուչիկի 27/14, հեռ. +37498350303, info@leykoalex.am
3	Նարեկ Շահվերդյան Վարդանի ԱԶ	- Արմավիր, Վաղարշապատ, հեռ. +374 44 84 20 20, ani-hakobyan-95@list.ru

բ/ Մասնակիցների կողմից աճուրդի ամփոփման ժամկետի ավարտին առաջարկված գները հետևյալն են.

Չափաբ. համարը	Գնման առարկան			Մասնակիցների անվանումները և առաջարկված գինը ըստ չափաբաժինների առանց ԱԱՀ-ի (<< դրամ)			Նախահաշվային գինը /<< դրամ/
	անվանումը	Չափի միավորը	քանակը	ՍԴԴ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Լեյկո	Նարեկ Շահվերդյան Վարդանի ԱԶ	
1	2	3	4	5	6	7	8
1.	ծեռնոցներ	հատ	90		126000		54000
2.	ախտահանիչ նյութեր	հատ	19500		700000		237500
3.	ախտահանիչ հեղուկ նյութեր	հատ	50		144000		60000
4.	դիմակ	հատ	150	202082	204165.66	250000	625000

գ/ Գնման առարկայի բնութագրերի հիմնավորումներ չեն ներկայացվել, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

II. Հայտերի գնահատման մասին

 (Աննա Ավետիսյան)

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց հայտերով ներկայացված փաստաթղթերը և արձանագրեց, որ.

ա/ Լեյկո-ի կողմից 1-3-րդ չափաբաժինների համար ներկայացված գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

բ/ էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի կողմից մերժվել են Լեյկո-ի կողմից ներկայացված հայտը 1-3-րդ չափաբաժինների համար, բացառությամբ 4-րդ չափաբաժնի՝ հետևյալ հիմնավորմամբ, առաջարկված գինը գերազանցում է նախահաշվային գինը:

գ/ ՍԴԴ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացված աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (հավելված 1) չի համապատասխանում ՍԱԾ ԷԱԾԱՊՁԲ-21/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված պահանջներին՝ «ռուսերեն լեզվով անվանումը» տողում լրացված է մասնակցի անվանման հայերեն տարբերակը, դիմում-հայտարարության 2-րդ կետի երկրորդ պարբերությունում «մասնակցի անվանումը»-ի փոխարեն լրացված է տնօրենի անուն, ազգանունը՝ Մարտիրոս Սաֆարյան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը որոշեց.

ա/ մերժել Լեյկո-ի և Նարեկ Շահվերդյան Վարդանի ԱԶ-ի կողմից ներկայացված հայտը 4-րդ չափաբաժնի համար հրավերի 8.9 կետով սահմանված պահանջի համապատասխան:

բ/ 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին հիմնավորմամբ՝ առաջարկված գինը գերազանցում է գնման հայտով սահմանված գները:

գ/ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային աճուրդի հրավերի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն համակարգի միջոցով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

դ/ ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2021թ. ապրիլի 14-ին ժամը 12.30-ին ք. Երևան, Նալբանդյան 13 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ




Աննա Ավետիսյան

անդամներ՝



Հ. Ղուլյան

քարտուղար՝



Մ. Գրիգորյան

Գ. Զանջուղազյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան

12 ապրիլի 2021թ.

ՍԱԾ ԷԱՃԱՊՁԲ-21/2 ծածկագրով էլեկտրոնային աճուղով ապրանքների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ավետիսյանս, անդամներ՝ Հ. Ղուլյանս, Մ. Գրիգորյանս հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Զանչուղազյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի

նախագահ




Աննա Ավետիսյան

անդամներ՝



Հ. Ղուլյան

քարտուղար՝



Մ. Գրիգորյան

Գ. Զանչուղազյան